

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔՅՈՒՐՏՅԱՆ (ԱՄՆ)

ՀԱՄԱՌՈՏ ՑՈՒՑԱԿ
ՀԱՅԵՐԵՆ ԳՐԶԱԳԻՐՆԵՐՈՒ ՔՅՈՒՐՏՅԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՅԻ
Ի ՈՒՒԶԻԴԱ. ԳԱՆՋԱՍ. ԱՄՆ

Հավաքածուն ամբողջովին կազմված է անձնական միջոցներով: Առաջին գրչագիրը ստացված է 1918-ին, երբ հազիվ 16 տարեկան պատանի էի: Այժմ գրչագիրները կախնվին բնակարանիս մեկ մասնավոր մատենադարան սենյակի մեջ: Կարելի եղած ամեն խնամք կտարվի անոնց ապահով պահպանունության համար: Որևէ արգելիչ չկա յուրջ և պատասխանատու անձերու կամ հաստատություններու կողմե անոնց օգտագործման համար: Միշտ ընդատաջ գացած եմ հաստատություններե և գիտնական աշխատասիրողներե եղած դիմումներուն՝ լուսանկարելու կամ արտագրելու:

Նեևանի Մատենադարանի «Բանբերին» խմբագրության ցանկության համաձայն՝ խոստացա համառոտ ցուցակագրություն մը պատրաստել գրչագիրներու հավաքածուիս, որպեսզի պատվարժան խմբագրությունը կարենա հրատարակել: Նման ցանկ մը քեև գիտական պահանջներու համար անբավարար և սակայն, կարևոր է հրատարակել, որպեսզի մասնագետներ ծանոթ ըլլան իր ընդհանուր գծերուն մեջ անձնական այս ամենամեծ հավաքածուին, ուր կգտնրվին բազմաթիվ եզակի գրչագիրներ:

Տեղի խնայողության համար օգտագործած եմ հետևյալ հապավումները. Լուս.—լուսանցազարդ, Ման.—ծանոթություն, Հան.—հանգամանք, Հիշ.—հիշատակարան, Մանր.—մանրանկարչություն, Մեծ.—մեծություն, Պահ.—պահպանակ, Պար.—պարունակություն: Մեծությունը նշված է մատնաշափով. նախ նշված է քերթի, ապա՝ գրադաշտի (փակագծերու մեջ) մեծությունը:

Հիշատակարանները կհրատարակենք իրենց գլխավոր մասերուն մեջ:

1

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(ՓԲ դար)

Թերթ՝ 227: Մեծ՝ $6,5/8 \times 9 \times 2,1/4$ ($4,3/4 \times 7,1/4$): Գիր՝ երկսյուն, փոքր երկաթագիր: Նյութ՝ բնտիր մազաղաթ: Տող՝ 17, երբեմն՝ 18: Կազմ՝ ներսեն թղթապատ, շաղանակագույն կաշեպատ տախտակ, փ՛ղ դարու, պարզ ճնշագծերով: Հան՝ լավ. կազմելու ատեն շատ կտրված, լուսանցազարդերը վնասելու չափ: Վերջեն երկու սրակ կազմահան: Մանր՝ չունի: Լուս՝ ոսկեփոշի կտրակներ՝ կարմիր, կանաչ և կապույտ գունավորված: Գունագեղ և դեղիցիկ հանգուցագիր: Պահ՝ սկիզբը բոլորգիր Ավետարանի երկու թերթ, թղթյա: Պար՝ Չորս Ավետարանները: Սկիզբեն 15 թերթ մազաղաթ, փոքր երկաթագիր Ավետարանի մը վրա բոլորգիր: Ունի պակաս թերթեր: Երկու երկաթագիր գրչագիրներե կազմված կերևա: Հիշ՝ չունի:

Ման. Գրչադիրս նախկին Սերաստիո Ս. Նշանի հավաքածուին (Գուշակյան ցուցակ, թիվ 61, «Հանդէս ամսօրեայ», 1926, էջ 43):

2

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(ժԻ դար)

Թերթ՝ 272: Մեծ՝ $6,3/4 \times 9,1/2 \times 3$ ($5 \times 7,1/2$): Գիր՝ երկսյուն, բնաիր փոքր երկաթադիր: Նյութ՝ բնաիր մագաղաթ: Տող՝ 21: Կազմ՝ նախորդին պես: Ներսեն Ա. փեղկը պատած թղթյա բոլորդիր Ավետարանի մը թերթով: Հան՝ լավ, կազմելու ասեն լուսանցադարդեր կտրված: Մանր. և Լուս.՝ № 1-ին նման: Պահ՝ շունի: Պար՝ Չորս Ավետարանները:

Ման. նախորդ գրչադրին պես Սերաստիո Ս. Նշանի հավաքածուին (Գուշակյան ցուցակ, թիվ 21, «Հանդէս ամսօրեայ», 1924, էջ 520):

Հիշատակարան

Թերթ 78բ, Բ սյունակ. Բուն գրչի հիշատակարանին ջնջված տեղվուն վրա՝ բոլորդրով. «Քրիստոս աստված, անասանելի յափտեան պահեսա զպարոն Սմբատ և զտիկին իւրան Իֆա (կամ՝ իւր Անիֆա), որ և ստացան զսուրբ Աւետարանս յարդար վաստակոց իւրեանց...»:

Վերնույն ներքև շարքված բուն գրչություն. «Զմեղապարտ գրիչս զԿողմա՝ ազաչեմ յիշել»:

Թերթ 272ա, գլխավոր հիշատակարան. «Փառք... Ես նուաստ քահանա և կրանաւորս Վարդան, զփափաքումն սրտի իմոյ և զբյիշատակ հոգոց իմոյ ևս զքեզ զսուրբ Աւետարանս իմով աշխատութեամբ և արգեամբք ծաղկեբանկ նկարով և ոսկով զարդարեալ, ի յիշատակ հոգւոյ իմոյ և (թերթ 272բ) ծնողաց իմոց, հար իմոյ՝ Գաթի, և մար իմոյ՝ Թագուհէ, և առաւել հարեղբար իմոյ՝ Գրիգորի, որոց ողորմեացի աէր Քրիստոս և հանկուսցէ զհոգիս նոցա ի դասս արդարոց: Եւ ևս ակն ունելով յողորմեաճն աստուած, զի ընկալցի զսակաւ նուերս... ԶՊապոս շնորհալից պատանեակ և հարազատ որդեակ իմ յիշեսցիք ի Քրիստոս»:

«Շնորհիւ տեան սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զկենսաբեր սուրբ Աւետարանս ի ճշմարիտ և ի փառաւոր արիւնակէ, որոյ մականունն կողոան... (մնացեալը կպակսի՝ կտրված ինկած բլլալով):

3

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(ժԻ դար)

Թերթ՝ 227: Մեծ՝ $4-4 \times 5,1/2 \times 2$, ($2 \times 2,7/8$): Գիր՝ երկսյուն, բնաիր մանր բոլորադիր: Նյութ՝ բնաիր մագաղաթ: Տող՝ 25: Կազմ՝ կաշեպատ տախտակի

* Կողմա գրչի մասին տե՛ս Կ. Պոլսո «Շողակաթ» պարբերականի 1952, հեղ.-նոյ. և զեկտ.: թիվերուն մեջ: նաև անգլիերեն Journal of Royal Asiatic Society, London, 1942, № 3—4. «An Important Armenian MS. with Greek Miniatures», Տեո նաև Kansas Magazine, 1948. «The Book of Kozma the Scribe», իսկ ասկէ համաստադրյալ Catholic Digest, 1951, հունիս, ութ տարբեր լեզուներով:

վրա կիտվածազարդ արծաթապատ: Ա փեղկի վրա Խաչելութիւնն և Բ փեղկի վրա՝ Հարութիւնն: Վարպետ աշխատանք է և անտարակույս՝ ժէ դարեն: Հան. լավ ու տոկուն, սակայն քիչ ինչ գունաթափ: Պահ.՝ շունի: Մանր. և Լուս.՝ ճոխ. մանրագիծ, գունազեղ, թեև մի քիչ գունաթափ: Սովորական ոճ, բայց վարպետի գործ: Պար.՝ Չորս Ավետարանները:

Հիշատակարան

Ունի 1382 թվականով քանի մը փոքր կեղծ հիշատակութիւններ: Սակայն սկիզբը կա անճահ գրչութեամբ. «Սուրբ Աւետարանս կենսաՎուխ ե[ւ] ի յիշատակ Ակնցի Իգնիկանց (ի Գնիկանց) Սիւքիասի և Սարգիսի և Մելիք տիկնւշ, որոյ ցերամբ կայ յիշատակ Ակն քաղաքիս մի շքեղաշէն եկեղեցին, որ կաճուցեալ է Սուրբն Յակոբայ, յորդորանոր մեծն Գ. Արփիարի Բարձեղի Տորախենց, որոնց եղիցի վարջատրութիւն»:

4

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(1691 թ.)

Թերթ՝ 282: Մեծ.՝ $8,1/4 \times 6,1/4 \times 2,1/2$ ($4 \times 5,1/2$): Գիր՝ երկսյուն, ոչ բնտիր բոլորգիր: Տող՝ 20: Նյութ՝ եվրոպական դժանիշյալ թուղթ: Կազմ՝ գրչութեան ժամանակակից, դրոշմազարդյալ գորշ կաշեպատ տախտակ, ժամանակին արծաթազարդ, որոնք այժմ պոկված են ներքին կազմալաթերուն հետ: Հան.՝ լավ, տեղ-տեղ գունանշված խոնավութենէ: Մանր. և Լուս.՝ նախնական արվեստով, անավարտ: Պահ.՝ շունի: Պար.՝ Չորս Ավետարանները:

Հիշատակարան

Թերթ 139թ, բուն գրչին. «...ողորմեա Գաւթի զպրի՝ նուստ հողիկ և կողան ամեայնի: Եւ ուսուցիշս իմ՝ Խաչատուր զպրի և միւս ուսուցիշս իմ՝ Տէր Մկրտիչ քահանա[յա]պետին, և ծնողաց իմոց՝ Աւետիքին և մօրն իմոյ՝ Մարգրրտին և եղբօրն իմոյ՝ հանդերձ ամենայն արիւնամերձ աղգականց իմոց»:

Թերթ 282թ, բուն գրչին. «Փառք... Աւարտեցաւ... սուրբ Աւետարանս ի յերկիրս Գերմանիկոյ, ի գեղաքաղաքս ի Զեթուն, բնդ հովանեաւ սրբոյն Գրիգորի մեր[ոյ] Լուսաւորչին և սրբուհոյ ամէնօրհնեալ սուրբ Աստուածածնի և Յովհանու Կարապետին և սրբոյն Յակոբայ Մեծբինայ հայրապետին և սուրբ Հրեշտակապետին և սրբոյն Պարսամայ ճրգնօրին և սրբոյն Սարգիսի զօրավարին և սրբոյն Թէոդոսի զինօրին և այլ ամենայն սրբութեանցս, որ աստ կան բարեխաւս և օգնական ամենայն քրիստոնէից, ի թվին Հայոց ՌՃԽ (1691), ի կաթողիկոսութիւն Կիւլիկեցոց Տէր Գրիգորին, և առաջնորդութեան մերոյ գաւառի՝ Տէր Կարապետ աստուածաբան վարդապետի: Բայց զրեցաւ սա ձեռամբ անպիտան հողիկ և փոշի կողան ամենայնի՝ Գաւթի նուստի... հիշեցէք անպիտան հողս Գաւթի գրչիկս* և զհայր իյ՝ զԱւետիք ևս զմայրն իմ՝ զՄարգարիտն և զպապն իմ՝ զՏէր նոյ քահանայ և զմեծ մայր իմ զՄարգարիտ և զեղբայր իմ՝ զՄարգարէն և զՏօրեղբայր իմ՝ զՏէր Ստեփանոս քաջ բարունապետ և զՏէր Ովանէս վարդապետ, որ առ աստուած փոխեցաւ և

* Գաւթի գրիչ Զեթունցին մեղի հասած են Ավետարաններ 1691-են, 1695-են և 1727-են, բոլորն ալ ոչ բնտիր, ծաղկված, հավանաբար իրմէ իսկ:

զհօրեղբոր որդիք իմ՝ զԴաւիթ, որ առ աստուած փոխեցաւ եւ զնաղարէթ արեղան, որ է Ուլանէս, եւ զԽաշատուր զրշապետ, որ է ուսուցիչս իմ, եւ միւս ուսուցիչ իմ՝ զՏէր Մկրտիչ...»:

5

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(ժէ դար)

Թերթ՝ 279: Մեծ՝ $5,3/4 \times 8$ ($4 \times 5,1/2$): Գիր՝ երկսյուն, ոչ ընտիր բուրգիր, Նյութ՝ եզրուպական ջրանիշյալ թուղթ: Տող՝ 21: Կազմ՝ խավաբարտ, գորշ կաշեպատ, ճնշագիծով զարդարյալ, ներսեն ղեղին լաթապատ: Ունեցած է արծաթ զարդեր, այժմ անհետացած: Հան՝ լավ: Մանր. եւ Լուս՝ Մատթեոս իր խորանով եւ Մարկոս՝ պսկված: Դուկաս եւ Հովհաննես չէ կարելի ընտիր գործ նկատել: Տարրեր կերևա լուսանցազարդերու եւ խորաններու ծաղկողը: Պան՝ շունի: Հիշ՝ շունի: Պար՝ Չորս Ավետարանները:

Ման. Սիրելի մայրս, տիկին Ազնիվ Քյուրտյան, 1921-ին ութը ուրիշ զրշագիրներու հետ Կ. Պոլիս հույն հնավաճառն մը գնելով՝ ինծի ուղարկեց:

6

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(1562 p.)

Թերթ՝ 243: Մեծ՝ $6 \times 8,1/2$ ($4 \ 1/2 \times 6 \ 1/2$): Գիր՝ երկսյուն, բուրգիր: Նյութ՝ տեղական թուղթ: Տող՝ 20: Կազմ՝ գորշ կաշեպատ տախտակ, ոչ ընտիր ճնշագիծերով: ներսեն կարմիր մետաքս լաթով պատած: Ա. փեղկը ունի երկու գոհարազարդ խաչ, միույն վրա. «Յիշատակ է սուրբ խաչս Սուրբ Հռիմսիմին մահտեսի Թուշի (°), որդի Մարութին», իսկ մյուսին վրա. «Սուրբ խաչս չիշատակ է Մարիամին թվին ՌՀԱ. (1622)»: Հան՝ կաղմին կոնակի կաշին մասամբ պսկված, Բ փեղկը մատ մը այրած, կաղմապահը կիսով պատած: Մանր. եւ Լուս՝ բուրն ալ նախնական, սակայն անճահ ու անվարժ: Պան՝ շունի: Պար՝ Չորս Ավետարանները:

Ման. Գնված Փարիզ հնավաճառ Ինճյուճյանն 1930-ին՝ հինգ ուրիշ հայերեն զրշագիրներու հետ եւ ինծի խրկված ապրիլ 30-ին:

Հիշատակարան

Թերթ 242 ա, զրշեն. «Փառք... զաշխատաւղ եւ ծրաւղ զԱբել մեղուցեալ հոգի, եւ ըստ հոգոյ եղբայր եւ ընդ իս աշխատող վարդան արեղայն, եւ զճնաւզսն մեր... ի թվականիս հայոց ՌժԱ. (1562) գրեցաւ...»:

«Արդ, ես՝ Եղիայս եւ կողակիցն իմ՝ Փաշէն, ըզաստուածալուս սուրբ Աւետարանս ստացայք... չիշատակ ինձ եւ ծնաւդաց իմոց, զհայրն իմ՝ Երիմրայն եւ զմայրն իմ Սաւրանմալիք, եւ հանգուցյալ ի Քրիստոս զԲեկեհագն, Զաբարիայն, եւ եղբարուրդիքն իմ՝ Արանիան, եւ միւս եղբայրուրդին՝ Մարկոսն, եւ հանգուցեալ ի Քրիստոս Ախին (ընդգծյալ մասը ջնշված եւ լուսանցքին վրան գրված. «Յիշեցէք ի բարի զԱթանիայն եւ զմարն իր՝ Մարիանն եւ թոռն իւր Մարիան»), այս ալ ջնշված), եւ զթոռներն իւր՝ Ուլանէսն, եւ զբուրն իմ՝ նա-

նաքն, Յինամփաշէն եւ եղբարս դստերքն իմ՝ Հուրիխան, Սախպխան, Փարիխան, Թամամն, Թարառուկն, եւ զմիւս եղբարս դուստրն՝ Խանդին, Ուստինայն»:

«Արդ եւ զկողակիցն իմ՝ Փաշայն եւ ծնաւոր իւր՝ Ամիրղաւշն, եւ զԱթուանին, կողակիցն իւր՝ Խանումփաշան...»: Հաջորդ ինկած թերթի պատճառով հիշատակարանը կրնդ հաստատվի:

7

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(ԺՁ—ԺԷ դար)

Թերթ՝ 273: Մեծ.՝ $4,3/8 \times 3,3/8 \times 1,1/2$ ($2,1/8 \times 3$): Գիր՝ երկսյուն, փոքր բոլորգիր, ոչ ընտիր: Նյութ՝ եվրոպական թուղթ: Տող՝ 19: Կազմ՝ դրոշմադարձ գորշ կաշեպատ տախտակ: Ունեցած է արծաթ զարդարանք: Ներսեն չեղին սլարդ լաթով պատած: Հան.՝ լալ: Մանր. եւ Լուս.՝ սկիզբեն Ա. պրակը պոկված կպակսի, որով նաև Մատթեոսի մանրանկարը եւ խորանազարդը: Պոկված հանված է նաև Մարկոսի մանրանկարը եւ կիսախորանը: Ոչ մանրանկարները եւ ոչ ալ լուսանցազարդերը (միայն կարմրագիծ) սովորականեն զատ բաներ են: Պահ.՝ շունի: Հիշ.՝ կերևա չէ ունեցած: Պար.՝ Չորս Ավետարանները:

Ծան.՝ Այս ալ մինն էր այն ութը գրչագիրներու, որ մայրս ուղարկեց Կ. Պոլսեն 1921-ին:

8

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(1666 p.)

Թերթ՝ 254: Մեծ.՝ $3,1/2 \times 2,1/2 \times 2$ ($1,5/8 \times 2,1/8$): Գիր՝ միասյուն, փոքր բոլորգիր: Նյութ՝ մագաղաթ: Տող՝ 14: Կազմ՝ բարակ տախտակ, վրան կանաչ լաթ եւ վրան ալ գորշ կաշի: Կանակի կաշին պոկված: Ներսը կարմիր, դեղին, շերտագիծ մետաքսյա լաթ: Հան.՝ լալ: Մանր. եւ Լուս.՝ Ղուկասի մանրանկարը եւ կիսախորանը սուր դանակով կտրված հանված: Հովհաննու մանրանկարը կհիշեցնե իտալական արվեստ: Լուսանցազարդերը կարմրիվ, կապտիվ եւ սուկիով ու կանանչով զարդարված: Պահ.՝ շունի: Պար.՝ միայն Ղուկասի եւ Հովհաննու Ավետարանները:

Ծան.՝ Չեռագիրը ուրիշ հայերեն եւ մեկ պարսկերեն գրչագրի հետ գնած էմ 1925-ին Նյու-Յորք՝ գորգավաճառ Թոփալյան եղբայրներին:

Հիշատակարան

Թերթ 252ա, գրչեն. «Շնորհոք... աւարտեցաք զյառաջարկեալ գործ ծրագրութեանս այսմ աստուածարուխ եւ վարդափթիթ մատենիս, որ կոչի Աւետարան, ի յերկրիս Արարադեան, ընդ հովանաւ սուրբ եւ գերահռչակ աթոռոցս էջմիածնի, ի հայրապետութեան Տեառն Յակոբայ՝ սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց, եւ ի թագաւորութեան փոքր Շահպասի, եւ ի թուարերութեան Հայկազեան տումարի՝ ՌՃԺԵ (1666) ամի, (թերթ 252բ) ձեռամբ մեղսամակարդ եւ թրշուառացեալ Մարկոս արեղայի, յիշատակ անջինչ եւ մշտնջենաւոր մահգեսի Սարգսին...»:

«Գարձեալ չիշեցէք ի Քրիստոս զծաղկող սորա զՅովսէփ սրբասուննդ կրօնաւորն, որ բազում աշխատեցաւ ի վերա սորա...»:

«Եւս առաւել չիշեցէք ի Քրիստոս եւ զիս զբանի վատնող զՄանուէլս, որ կազմեցի զսա չիշատակ Սարգսին»:

9

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(ժե—ժՁ դար)

Թերթ՝ 247: Մեծ՝ $7,1/8 \times 10 \times 2$ ($4,1/2 \times 7,5/8$): Գիր՝ երկսյուն, լավ նստրգիր: Նյութ՝ հասա տեղական թուղթ: Տող՝ 21: Կազմ՝ հավաքմանս մաս կազմած է անկազմ: Խնամով մարրվելի վերջ՝ վերակազմված մութ կապույտ կաշեպատ խավաքարտով, 1945-ին: Հան՝ ստորին մասը բիշ մը այրած, առանց գրչության վնասելու: Մանր. և Լուս.՝ ունի միակ թերթ մը կանոնախորաններին: Կպակսի Մատթեոսի մանրանկարը, կիսախորանը և սկիզբը: Ժուժկալ գույներով լավ ծաղկումներ: Ներկայանալի են մանրանկարները: Պահ՝ շունի: Պար՝ Չորս Ավետարանները:

Ման՝ Գրչագիրը գնված է 1937-ին Կ. Պոլիս՝ Պետրոս Նշանյան գրավաճառեն, որ ինձի ուզարկեց ութը ուրիշ գրչագիրներու հետ:

Հիշատակարան

Թերթ 201ր. Ղուկասի վերջը կոշտ բուրբագրով մը, ո՛չ գրչին. «Աստուած սղորմի Ուլուխալային համարէն ժողովրդեան մեծի եւ փոքու, առ հասարակ ամենեցուն: Այս Աւետարանս Համիթ բաղար ծախ ծղեց Տէր Բարսեղ, Ուլուխալայի ժողովուրդ վեր կանկնեցան՝ մեր վաճից չիշատակ մեր կանոնը: Գարձեալ առին ողարկեցին, որ եկօ ի Ուլուխալան, տոլվաթվորնին ժողովեցան, ի վեց խուտիշ գին առին, Սուրբ Մեսրոպայ չիշատակ դրին... Թվականս ՌՃ (1651)»: Կա նաև ՌՂ (1628) թվականով հիշատակարան մը:

10

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(ժՁ դար)

Թերթ՝ 319: Մեծ՝ $6,7/8 \times 4,7/8 \times 8$ ($3,1/8 \times 5,1/4$): Գիր՝ երկսյուն, միշակ բուրբգիր: Նյութ՝ եվրոպական թուղթ: Տող՝ 18—21, հաճախ տարբերելով: Կազմ՝ ինձի անկազմ հասած, այժմ՝ կաշեպատ, կարելի եղածին շափ խնամով կազմված 1937-ին ի Ս. Ղազար: Հան՝ թերթ 89—112 խոնավությունի խիստ վնասված և գրությունը փշացած, ունի մոմի այրուծքներ: Թերթ 303, 304, 309—315 վերջի նորոգողի ավելացված: Մանր և Լուս.՝ հավանաբար մանրանկար շունի սկզբին: Կան Մարկոսի, Ղուկասի և Հովհաննու կիսախորանները, լուսանցազարդեր՝ տեղադիժ և կարմրավ, վարժ գծված: Պահ՝ շունի: Պար՝ Չորս Ավետարանները:

Ման՝ Գրչագիրս նվիրվեցավ ինձի 1937-ին ի Փարիզ Պր. Բյուզանդ Թոփալյանի:

Հիշատակարան

Թերթ 94ա, ստորին լուսանցքին. «Եղուկ զվատ թողաթիս զմէշում (այսպէս) նշած»:

Թերթ 151բ, ստորին լուսանցքին. «Վայ գրուգս, եղուկ զձիւնս, թանարս պաղեցաւ եւ ձեռս քմեցաւ, եւ գրիշս անկաւ»: Անդ, Ա սյունակ, կարմրավ. «Աղաշեմ զձեզ յիշեցէք ի Քրիստոս զԵլճիաէն»: Բ սյունակ, մանրատառ, գրչեն. «Ով որ աստուած ողորմի ասէ ի բոլոր սրաէ գրողի գրոցս, նա աստուած իւրն ողորմի: Եւ քահանայն, որ ասէ թե՛ Աստուած զՄարտիրոս իրիցի մեղքն թողու, նա աստուած զիւրն թողու. ամէն»: Կա նաև սև մեկանով նոտր-գիր ջնջված գրութիւն:

Թերթ 256բ, Բ սյունակ, գրչեն, մանրատառ. «Յիշեցէք ի Քրիստոս զՄարտիրոս փժուն գրիշս, աղաշեմ զամենեսեան»:

Գրչադիրը անտարակույս ժԶ դարեն է: Գլխավոր հիշատակարանը կպակսի:

11

Ո Ս Կ Ե Փ Ո Ր Ի Կ

(ԺԶ—ժէ դար)

Թերթ՝ 247: Մեծ.՝ $12 \times 8,3/4 \times 4$ ($6 \times 9,1/4$): Գիր՝ երկսյուն, վարժ միջակ բոլորգիր: Նյութ՝ ջրանիշյալ եվրոպական հաստ թուղթ: Տող՝ 31: Կազմ՝ հնամաշ կաշեպատ տախտակ, հասարակ ճնշադարդերով: Ներսեն կարմիր եւ սև տպածո լաթով պատած: Ունի կազմահան թերթեր: Հան.՝ գործածութիւնն ղեղնած ու աղտոտած եւ սակավ լավ: Մանր. եւ Լուս.՝ ունի միաէջյան գունավոր մանրանկար՝ վարդապետ մը զալաքաթուղթի վրա գրելու գրադված, իսկ իր առջև երկու այր եւ երկու կին՝ ծնրադիր, գուցե ստացող: Գունավոր խոշոր խորան մը եւ լուսանցազարդեր, վարժ, թեև հասարակ: Պան.՝ սկիզբը երկու եւ վերջը ամբողջական թերթ, թղթյա. երկաթագիր Ավետարանն մը, գուցե ժԲ դար: Պար.՝ Ոսկեփորիկ, որ կսկսի Մովսես Երզնկացու խրատներով, որուն կհաջորդե Հովհ. Երզնկացու (Պլուզի) խրատները, եւ կշարունակե՛ Հովհ. Ոսկեբերան, Եփրեմ եւ այլն:

Ման.՝ Գնված 1951, մայիս, Կ. Պոլիս գրավաճառ Պետրոս Նշանյանէ:

Հիշատակարան

Թերթ 2ա. «Ի թիւն Հայոց ՌՄՂէ-ին (1828) Ընուսաց արքայ Նիկոլա Պավլովիչը յարէւելից զիճէն զիմէլով տաճկաց աղբին, պատէրազմունկ տալով, հալածէլով, կոտորէլով, անպատմէլի արչունահէղութիւն անէլով, Ղարս քաղաքէն, Ախրլցըղա քաղաքէն, Կարնոյ քաղաքէն մինչև Կիմիշխանա քաղաքն երթալով, էտ նորայ Բ(2) արքայն Նիկոլա Պավլովիչը, Սուլզան Մահմուտը հաշտութիւն անէլով, մէկ տարի Կարնոյ քաղաքը կէցաւ, յետքը ելաւ ու զնաց, շատ ալ հայ գնաց, այնմը բանակին զօրապէտն ալ Պացկովիչն էր եղէցի»: Կա պարզ կնիք մը՝ «Մ. Օ.», որ Մաղաքիա Սրբազան Օրմանյանի կնիքը նկատված է, իր գիրքերուն համար:

Հատվածներուն ոմանց տակ գրչեն կա հիշատակութիւն, օրինակ.

Թերթ 9բ. «Ողորմած աստուած, ողորմեա ստացողի գրոցս՝ Աստուածատուր վարդապետին եւ ծնողացն՝ Շահրադին եւ Զամանին, եւ Մարգարտին,

և Գրիգոր գրչիս»։ Գլխավոր հիշատակարան կերևա, թե ինկած կորսված է՝ վերջի թերթի հետ։

12

Ո Ս Կ Ե Փ Ո Ր Ի Կ

(1551 p.)

Թերթ՝ 541: Մեծ՝ $12,1/4 \times 8,1/4 \times 4$ ($9,7/8 \times 6$): Գիր՝ երկսյուն, միջակ, անկանոն բուրդիր: Նյութ՝ հաստ, գեղնորակ մեղական թուղթ: Տող՝ 31: Կազմ՝ գրոշմադարդ, կաշեպատ տախտակ, հնամաշ, կոնակի կաղմը պոկված ըլլալով՝ վերստին 1948-ին կազմել ավի հին կաղմով: Ներսեն կարմիր ու սպիտակ խաշաձև հյուսված լաթով պատած, Հան՝ լավ: Մանր. և Լույս՝ Սկիզբը խորան լուսանցադարդ, երկու կիսախորան, թռչնագիր զարդագրեր և այլն, վարժ և սովորական: Ունի լուսանցքի մանրանկարներ ալ: Պան՝ սկիզբը և վերջը գրչագրին շափին հարմարցված մեկ-մեկ թերթ մագաղաթյա Յայամաուրքի բուրդիր: Պար՝ № 11-ին նման խորագրերով կսկսի:

Ման՝ Գնված Կ. Պոլիս Երվանդ Ալյանագեն, 1948-ի գարնան, և որովհետև թղթատարին համար ծանր և խոշոր նկատվեցավ հատորը, ուրեմն երկուքի կիսվեցավ և այնպես խրկվեցավ՝ խախտելով կաղմը և փշայնելով կռնակը, որ հոս վերստին նոր կռնակով և հին կողքերով վերակաղմվեցավ հասնելեն քիչ վերջ:

Հիշատակարան

Ամեն հատվածի վերջ մանր հիշատակություններ, զանազան ոտանավոյններ, որոնցմե օրինակ մը հոս.

Թերթ 226—227 ա, գրչեն, լուսանցքներուն տակ.

«Ով որ զարիպի ոչ ողորմի,

Ինքն այլ յաւատր չերկիր վարի,

Զափն դնէ ինքն չերեսին,

Եւ Բ (2) աշացն աղիողորմ դառն արտասուի,

Շնորհօք սուրբ հոգոյն որդոյ միածնի,

Զարկսիս և զազան վաղ կորնչի:

Եղիցի, Եղիցի»:

Թերթ 536բ. կսկսի գրչեն գլխավոր հիշատակարանը շատ երկայն, որուն կարեւոր մասը հոս կուտամ միայն. «...զստացողք սուրբ տառիս գհեղահոգի կրանաւորն՝ զՏէր Հէրապետ և զեղբարքն՝ զՎարդան, և զկին՝ զՆազար և զաւակսն՝ զՍտեփաննոս, զԹումայ, և (անուանտեղ պարապ) զԱւագ, և զկուղակիցն՝ զԽաթունշա, և զորդին՝ զԱստուածատուրն, և զքրերքն՝ զՄրաթն և զԳուլիգար, և զծնօղսն՝ զԱզան և զԲաղշայ, զԽոսրով, զՄիրիջան, և զկենակիցն սոցա՝ զԾովինար, և զԴեղձուն, և զորդիքն սոցա՝ զՄրապիոն սարկաւաղն, և զքոյրն՝ զՇահում, զՅակոր, և զամուսինն (կարմրավ ավելցված)՝ զԹարէզ, զՀրապետ, և զմիւսն՝ Խոսրով և զԳաւհար, և զննջեցեալսն ի Քրիստոս՝ զՀէրապետ, և զԹագուհի, զՎարոս, զՍիրամարգն և զԱւետիս, և զամենայն արեան մերձաւորսն սոցա...»:

«Եւ, արդ, գրեցաւ սուրբ զիրքս ձեռամբ ամենամեղ և Եղկելի, անարհեստ և փճրուն գրչի՝ Իգնատիոս արեղայի, ի թվականիս Հայոց Ռ (1551) ի չերկիրս Մոկաց, ի վանքս, որ յորջորջի Սուրբ Վարդան, որ է հանդէպ Նանէնից և Կարթանից և առ ոտն Առնոսայ: Ի կաթողիկոսութիւնն Աթաբարայ՝ Տէր Գրիգորիսի և ի հէրապետութիւն վանիցս Սրապիոնի (տակը ավելցված մանրատառ

«Տէր»), ի դասն եւ ի նեղ ժամանակի, որ անարէնք դարացեալ են ի վերա ազգիս քրիստոնէից, վասն զի Գ(3) այր ի հարկանելոյ այլազեանց մեռան, եւ դարձեալ զոմանս հարկանեն, եւ զայլսն տուգանեն, եւ այլ բազում շարիս եւ սճիրս զործեն...»: «...Ողորմեա համօրէն եղբարցս՝ երիցս երանեալ, հեղահոգի եւ սրբասնունդ վարդապետին Յովսէփի եւ ներսէս եպիսկոպոսին, մահդասի Տէր Հէրապետին, Ստեփաննոս եւ Թումային, Գ(4) Տէր Յոհաննէսին, եւ Տէր Կարապետին, եւ Տէր Ատոմին, Տէր Սահակին, եւ Տէր Գրիգորին եւ Տէր Մկրտչին, Յովհաննէս եւ Սիմէոն սարկաւազին, որ կու աշխատին ի դրունս Սուրբ Վարդանայ զօրավարին, եւ դմեղ ի մարմնական գործոց պահեն. եւ լաւ հարկիր առնեն...»:

«Եւ արդ, կացցէ սուրբ գիրքս ի դրունս Սուրբ Յովհաննէսի, ի յաստուածապահ սեաւոս՝ Ասկրնջաւս ձեռամբ Տէր Յովսէփին, Տէր Ստեփաննոսին եւ Տէր Մարտիրոսին եւ սարկաւազացն Սրապիոնի եւ Յովաննէսի, որ լաւ ընթեռնուն, եւ հրոյ եւ ի շրոյ եւ ի գէշ նիսթոյ ի դատ պահեն... Ողորմեա մեծահաւատ եւ հեղահոգի Միրիչանին եւ սրբամիտ կնոջն՝ Շամամին եւ դստերն՝ Ազիզին եւ Գուհարին, եւ հանգուցեալ եղբարցն՝ Հէրապետին, Թումային եւ Անճրեւին, եւ ծնողացն Կարապետին եւ Ազրզին եւ ամենայն արեան մերձաւորաց սոցին, որ զիւր հայրական շինեալ տունն հտուր Ասկրնջաւուր Սուրբ Յովաննէսին՝ ժամատուն...»:

Գրչությունը կատարված է Մոկս՝ Սուրբ Վարդանի վանքը, նանենից եւ Կարթանից հանդեպ, Առնոսա լեռան ստորոտը, եւ նվիրված Ասկրնջավ Սուրբ Հովհաննէսի եկեղեցվուն: Այլուստ ծանոթ այս վանքը Հ. Հ. Ոկսյան երկու տարրեր վանք կարծած է («Հանդէս Ամսօրեայ», 1944, էջ 60—62): Գրիչը՝ Իգնատիոս, բազմարդյուն գրիչ մըն է: Հայրը՝ Սահակ, մայրը՝ Գուգան, եղբայրը՝ Հովսեփ, բույրը՝ Հ(Խ)անդուտ, ուսուցիչը՝ Գրիգոր սարկավագ: Իր գրիչն է Իգնատիոս, որմե ծանոթ է Ավետարան մը (Վասպուրականի կալայան ցուցակ, № 276) 1560-են, նույն վանքը, Տեր Հովհաննէսի համար: Հոս կհիշե, որ «...յայժ դառնութեամբ եւ շտապով գրեցի. դբահանայ մի հերետիկոս պրակսաւատ՝ զԱրսէն անուն, մատնեաց զիս այլազգեաց, եւ ես ահիւ եւ փախստական էի՝ մինչև որ աւարտեցի»: Գուցե ինքն է այն Իգնատիոսը, որ 1561-ին մագաղաթյա Մայր Մաշտոց մը գրած է Ղարասու գիւղը, Խիզան, Սուրբ Գեորգի հովանյավ, եւ դեռ հոն գրչությամբ գրազված էր 1567-ին՝ գրելով Խորենացիի, Ասողիկի եւ Լաստիվերտացիի պատմութեանց գրչազիր մը: Իգնատիոս 1560-ի մատնությունեն վերջ, կերեալ թե Խիզան փախավ՝ Ղարասու գյուղը ապաստանելով:

13

Գ. Յ. Ն. Չ. Ա. Ր. Ա. Ն.

(1668 p.)

Թերթ՝ 310: Մեծ.՝ $11,3/4 \times 8 \times 2$ ($8,1/2 \times 5,1/2$): Գիր՝ միասյուն, խոշոր քոլորզիր: Նյութ՝ սպիտակ եփրոպական թուղթ: Տող՝ 23: Կազմ՝ ինծի անկազմ եկած եւ հետո, 1948-ին կաշեպատ խավաքարտով կազմված: Հան.՝ թերթերուն վերնամասը մինչև 2 տող խոնավությունե ազդված: Սկզբն երկու թուղթ, ցանկը պարունակող, պատուած ու մաշած: Մանր. եւ Լուս.՝ սկիզբը խորան եւ 5 կիսախորան՝ սովորական լուսանցազարդերուն հետ, վարժ ծաղկողի մը կողմե կատարված կարմրավ ու կապտիվ: Պահ.՝ շունի: Պար.՝ Գանձեր ու տաղեր:

Ման.՝ Գնված է 1947-ին Կ. Պոլիս, գրավաճառ Պիմեն Զարդարյանի:

Հիշատակարան

Թերթ 311ա. «Արդ գրացաւ Գանձատեարս թվին ՌՃԺէ (1668), ի քաղաքն Արապկիր, ի դուռն Սուրբ Տիկին Եկեղեցոյն, ձեռամբ յոգնամեղ եւ մեղսաթաւ Խաչատուր գրչի, պիտականուն բանասիրի, անուամբ կոչեցեալ քահանայ. . . զհայրն իմ՝ Նաուփաղ եւ զմայրն իմ Շալչուկն եւ Ք(2) եղբայրքս իմ՝ զՄարկոս քահանան եւ զԿարապետն. որ փոխեալ են առ Քրիստոս...»:

Խաչատուր քահանա գրչեն է՝ Արապկիր, 1664-ին գրված ժամագիրքը, Վիեննայի Մխիթարյան մատենադարան, №451:

14

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Յ

(1588 p.)

Թերթ՝ 61: Մեծ.՝ $3,3/4 \times 5,3/4 \times 1$ ($2,1/2 \times 4$): Գիր՝ միասյուն, ոչ կանոնավոր բուրգեր: Նյութ՝ մագաղաթ, լվացված գրչութեամբ կրկնագիր, այժմ դեղնած: Երկաթագիր Ավետարանի մը մասերը կարելի է որոշել Ղուկասի Ավետարանեն: Կա նաև խոշոր բուրգեր մասեր, հավանաբար Շարակնոցի մը: Կրնա ունեցած ըլլալ նաև երկսյուն բուրգեր գրչութեան մը կրկնագրերն ալ: Տող՝ 26: Կազմ՝ ստացած եմ ներկա նոր ճնշազարդ կաշեպատ տախտակյա կազմով: Հան.՝ լալ: Մանր. եւ Լուս.՝ կիսախորաններ, զարդագրեր եւ լուսանցազարդեր՝ սևագիծ, գունավորյալ սովորական ձևով: Պահ.՝ շունի: Պար.՝ Սկզբն պակասավոր. կսկսի ԻԳ եւ կավարտի ԻԸ պրակով. վերջեն պակաս չէ:

Ման.՝ Գնված է 1925-ին Լալպցիցի Գառլ Հիերզեման գրատունեն՝ ուրիշ գրչագիրներու հետ:

Հիշատակարան

«Փառք... Արդ, գրեցաւ տառս որ կոչի Շարակնոց, ձեռամբ ոգնայմեղ եւ անարժան, սուտանուն Կարապետ երէցս, ի Վ[ան], ի թվականութեանս ՌԼէ(1588). նորոգեցաւ Շարակնոցս լաւ եւ ընդիր արինակաց, որ կոչի Խլկացի»:

15

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Յ

(1679 p.)

Թերթ՝ 241: Մեծ.՝ $4 \times 5,3/4 \times 2,1/2$ ($2,1/2 \times 4$): Գիր՝ միասյուն, խաղաղ-րյալ նոտրգիր: Նյութ՝ եմբողական ջրանշյալ թուղթ: Տող՝ 24: Կազմ գրոշմազարդ կաշեպատ տախտակ, ներսեն դեղին մետաքսյա լաթ՝ հորիզոնական մանիշակագույն գծերով: Հան.՝ Ա. պրակեն միայն վերջին թերթը մնացած, 218 եւ 219 թերթերուն միջև թերթ մը կտրված հանված: Կտրված հանված են շարք մը լուսանցազարդեր, սմանք ալ ջնջել փորձված: Կան ուրիշ կտրված թերթեր ալ: Մանր. եւ Լուս.՝ եթէ ունեցած է մանրանկար, կտրված հանված են, ինչպես նաև կիսախորանները, որոնցմե միակ հատ մը կմնա՝ թերթ 148ա, որուն լուսանցազարդերը կտրված հանված է: Պահպանված միակ կիսախորանն դատելով, կերևա, թե մանրանկար եւ կիսախորան գունագեղ եւ ոսկիով եղած են: Գլխազարդ եւ լուսանցազարդ՝ կարմրավ եւ կապտիվ, սովորական: Պահ՝ շունի: Պար.՝ ձայնագրեալ շարական:

Հիշատակարան

Թերթ 241ա. «Գրեցաւ եղանակաւոր տառքս ձեռամբ յոգնամեղ և մեղօս-
սէր գրչի՝ Ստեփաննոս դպրի, թվին ՌՃԻԸ (1679), մարտի ամսոյ 9 (6), օրն
հինգշաբթի...»

16

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Յ

(1669 p.)

Թերթ՝ 391: Մեծ՝ $3,1/4 \times 4,13 \times 2,1/2$ ($2 \times 31/4$): Գիր՝ միասյուն, ուղղա-
ձիգ բալագոյն գծերու մէջ, խաղազբայլ բոլորգիր: Նյութ՝ ընտիր մագաղաթ:
Տող՝ 20: Կազմ՝ ճնշագծյալ և դրոշմյալ կաշեպատ տախտակ, սկզբնական:
Ներսէն լաթապատ չէ: Հան՝ շատ լավ, միայն 1 և 2 թերթերուն միջև թերթ մը
պատռած հանված: Մանր. և լուս.՝ տեղ բաց թողնված գրչեն, սակայն չէ
ծաղկված: Վերջի գրիչ մը կոպիտ գլխազրերով ամբողջացուցած է, չի ծաղկ-
ված զարդազրերը: Պահ՝ շունի: Պար՝ ձայնագրյալ շարական:

Ման՝ Գնված 1925-ին Նյու-Յորք՝ գորդավաճառ Թոփալյան եղբայրներն՝
N 8-ին և պարսկերեն գրչագրի մը հետ:

Հիշատակարան

Թերթ 371ա. «Փառք... Շարակնոց, ձեռամբ շանարգի և ֆանաքի Եփրեմի,
ի գիւղն որ կոչի Օղվերձ, ընդ հովանեաւ սրբոցն Ստեփանոսի նախավկայն,
թվին հայոց ՌՃԺԸ (1669)...»:

17

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐՁՆԿԱՅԻ (ՄՈՐՄՈՐԵՑԻ), ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ՔԵՐԱԿԱՆԻ
ԵՒ ՀԱՅ-ՀԱՅ ԲԱՌԳԻՐՔ

(1387 p.)

Թերթ՝ 158: Մեծ՝ $8 \times 5,1/2 \times 1,5/8$ ($3,1/4 \times 5,1/4$): Գիր՝ միասյուն, «Մեկ-
նութիւն Քերականի»-ին՝ հին նոտրգիր, «Բառգիրք»-ը՝ բոլորգիր: Նյութ՝ ջրա-
նիշյալ իտալական թուղթ, տոկուն, գործածությունէ աղտոտած: Տող՝ «Քերա-
կանին»՝ 19, «Բառգրքին»՝ 26: Կազմ՝ գրչության ժամանակէն քանի մը դար
վերջ, հասարակ, գորշ կաշիով պատած տախտակ, ներսէն կապույտ հասարակ
լաթով պատած: Կազմին վերի եղերքները մշտված, տախտակը կերևա: «Բառ-
գրքին» պրակները կաղմեն բաժանված: Հան՝ «Բառգրքին» սկիզբէն քանի մը
թերթ ինկած կորսված: Վերջի թերթը, որուն վրա էր գրչի հիշատակարանը, վե-
րէն վար կիսովին պատռված և կորսված, թեև հիշատակարանին մաս մը մնա-
ցած: Պահ՝ այժմ շունի: Մանր. և լուս.՝ մանրանկար շունի, իսկ ծաղկվելու հա-
մար տեղ բաց թողված է, որ մեկը սեւ մելանով փորձեր բրած է: Պար՝ Հովհ.
Ներսիսեան (Մործորեցի) «Մեկնութիւն Քերականի» մինչև 104ա, որմէ վերջ՝
«Բառգիրք»-ը մինչև վերջ:

Ման.՝ Գնված ութը հայերեն գրչագիրներու հետ 1921-ին պաշտելի մորս միջոցով, ի Կ. Պոլիս, զոց շուկային մեջ՝ հույն հնավաճառե մը, ուր տարիներ առաջ (1918) Պոլիս կատարած կարճ այցելութիւնս միջոցին, տեսած էի: Ողբացյալ մայրս՝ Տիկին Ազնիվ Քյուրայան, 80 թուղթ թրքական սակիով զնելով՝ թղթատարով ինծի Նյու-Յորք ուղարկեց:

Հիշատակարան

«Մեկնութիւն քերականի»-են անմիջապէս վերջը, գրչեն. «Զնուստս գրիչ՝ զՄարտիրոս յիշեցէք ի տէր, եւ աստուած յիշէ»: Իսկ ասկէ անմիջապէս վերջը տարրեր նոսր գրչութեամբ.

«Թ՛վին ՁԼ (1481), դեկտեմբեր] ժէ (17) օրն,

Պարոն Թ՛օլար պարծանք ազգիս,

Որ դուն յունիս անուն բարի,

Խելօք, Խիկար, հեղահոգի,

Մէջ յաշխարհի ես գովելի,

Պարոն զԱխնոյն է բո որդի,

Քեզ յիշատակ լինի բարի,

Որ ժառանգէ քզհայրենի,

Զաւակ նորա յոյժ բազմասցի,

Որպէս յաւազ յեզր ի ծովի,

Կամ որպէս յաստղք, որ ոչ թուի,

Նոյնպէս լիցի զաւակ նորին,

Որ ամենայն ազգաց գովի.

Ես Խութլուպէկս եմ անարժան...»:

Իսկ թերթ 158ր, որ «Բառգրքին» վերջին թերթն է, աւաղ պատուած է վանտալե մը եւ միայն մասամբ կկարդացվի: Անտարակուսելի կերպով որոշ է գրչութեան վայրը՝ «Կաֆաս» եւ թվականը՝ «ՊԼԶ (1387)»:

18

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(ՓԶ դար)

Թերթ՝ 225: Մեծ.՝ $7 \times 10, 1/2 \times 2$ (5×7): Գիր՝ երկսյուն, խոշոր բուրգիր: Տող՝ 21: Նյութ՝ տեղական հաստ թուղթ: Վերջեն հինգ թերթ կրկնագիր մագաղաթ: Նախկին գրչութեանը՝ միջին մեսրոպյան երկաթագիր: Կազմ՝ գնված անկազմ եւ քայքայված, պակասավոր: Խնամով մաքրելի վերջ՝ վերակազմել տվի կաշեպատ խավաքարտով Նյու-Յորք մայիս, 1945-ին: Հան.՝ սկիզբեն եւ վերջեն պակասավոր: Սկիզբեն քանի մը թերթերու լուսանցքները մաշած եւ մասամբ պատուած՝ քնազրին վնասելով: Գործածութեան, խոնավութեան եւ անխնամութեան ազդեցութեամբ, սակայն կարելի եղավ դարձյալ ներկայանալի գրչագրի մը վերածել: Ման. եւ Լուս.՝ պահպանված են Մարկոսի սկիզբի կիսախորանը, Ղուկասի մանրանկարը (մասամբ եղծյալ), սկիզբի կիսախորանը եւ Հովհաննէսի սկիզբի կիսախորանը: Թերթ 93ա-ի լուսանցքին՝ Գաբրիել Հրեշտակապետին ամբողջ մանրանկարը: Պար.՝ Չորս Ավետարաններ: Մատթեոսի սկիզբը եւ Հովհաննու վերջը կպակսին:

Ման.՝ Գնված 1942-ին Նյու-Յորք, շրջուն հնավաճառե մը, պարսկաստանցի հրեա, 15 զուլարի:

Հիշատակարան

Քերք 89ա, վերանորոգողեն. «...Արդ ...երկիւղած այրն Սարգիս... զնկց
զսուրբ լուսարուխ Աւետարանս, ի թվականիս Ռեթ (1600) եւ ետ նորոգել՝
յիշատակ իւր եւ ծնողացն, հօրն՝ Իշխանին եւ մօրն՝ Խանաղին եւ եղբարքն՝
Պարսումին, վարդանին, որ փոխեցան առ աստուած, եւ միւս եղբայրն՝ Խաշա-
տուրն, եւ քեւերքն իմ՝ Սեւտախանին, Սուլթան Խանումին, որ մահուանէ ի
կեանս փոխեցան»:

«Դարձեալ յիշեցէք Սարգսին եւ կողակիցն իւր՝ Ազիզն եւ որդին իւր՝
Մկրտիչն եւ միւս որդին՝ Աղէն, որ հանգաւ առ աստուած, եւ դուստր՝ Սուլ-
թանի եւ միւս դուստր՝ Հուռումն: Դարձեալ յիշեցէք Սարգիսն եւ պապն՝
Մկրտիչն եւ կողակիցն՝ Նասիպն, Մարեանն, Նուշիկն եւ որդիքն՝ Յովանէսն,
Մէլքումն, Թուրվանդէն, Եղիսարեթն, Խաթունն...»:

«Դարձեալ յիշեցէք աստուածասէր Սարգիսն եւ որդին իւր՝ Մկրտիչն եւ
կողակից իւր՝ Դաւաթն եւ որդիքն իւրեանց՝ Աստուածատուրն, որ փոխեցաւ առ
Քրիստոս... եւ միւս որդին իւրեանց՝ նորաբողբոջ եւ նորահասակն Յովհաննէս...
որդին՝ Աստուածատուրին եւ անտրանիկ որդին՝ Յովանէսն, կողակիցն՝ Մալա-
հին եւ զստերքն՝ Սալվարն, Թամամն, Սեւտիխան եւ քվերքն՝ Հուզուրն, Խա-
նաղէն, Ազիզն, Սարումն, Խաթունն, Թուխիկն...»:

«...Արդ գրեցաւ յիշատակարանս թվին ՌՃԺԳ (1664), ի թագաւորութիւն
կարմիր գլխին՝ փոքր Շահապասի, ի հայրապետութիւն Տեառն Յակոբայ Զու-
ղայեցոյ եւ իշխանութիւն Գեղամայ երկրի մելիք և տեր՝ պարոնաց պարոն
Մելիք պէկին, և առաջնորդ և եպիսկոպոսութիւն սուրբ ուխտին Մաքենայ՝
Խաշատուր վարդապետին»:

«Արդ գրեցաւ յիշատակարանս ի գիւղս Ճուլ, ընդ հովանեաւ եկեղեցաւ եւ
ի դուռն Կարմիր եկեղեցոյն...»:

Քերք 170բ, բոլորգիր, տարբեր գրչե. «Արդ, յիշեցէք զՍարգիսն, որ Աւե-
տարանս առաւ հալալ ընչից իւրոց, յիշատակն իւրն եւ իւր ծնաւորացն, հարն՝
Աւէտիսին եւ մարն՝ Մարդային, եղբարն՝ Կակոսին, կողակիցին՝ Շնորհսին,
վարդանին, զստերն՝ Թուրվանդին, եղբարն՝ Կողոսին, հարն՝ Կարապետին
եւ մարն՝ Դովլաթին, Կողոսի որդոցն՝ Պետրոսին, Առաքելին, կողակցին,
Կողոսի կողակցին՝ Նինիկին»:

Արդ, յիշեցէք զհանգուցեալ հեղահոգի Սարգիսն եւ իւր կողակիցն՝ Մար-
դարիտն եւ որդիք նոցա՝ Փարշէվանն, Սարգսի հարեղբայրն՝ Շրվանն, կողա-
կիցն՝ Շամամա, զստերն՝ Շահփաշին, Կոհերիքն, Թուխթարին, Գուլվարդին,
կուս ապաշխարող՝ Հանձրէվարդին, Սալշուկին...»:

Քերք՝ 225: Մեծ.՝ 5×7×2 (2,1/4×4,1/4): Գիր՝ երկսյուն, բոլորգիր:
Տող՝ 25: Նյութ՝ ընտիր հաստ մազաղաթ: Կազմ՝ պոկված և այդպես ալ ինձի
ծախված: Հան.՝ կպակսին սկիզբեն պրակ մը՝ կանոնատախտակներու, Մատ-
թեոսի նկարը եւ սկիզբի կիսախորանը, ներկա 10 և 11 թերթերուն մեջ թերթ

մը կոչակախի, ինչպէս նաև պրակ մը 58 և 59 թերթերուն միջև, որով Մարկոսի մանրանկարը և սկիզբը: Գարձյալ 180 և 181 թերթերուն մեջ պրակ մը հանված է, որով Հովհաննու մանրանկարը և սկիզբի կիսախորանը կոչակախի: 223 և 224 թերթերուն մեջ թուղթ մը կտրված հանված է: Ման. և Նուա.՝ կմնա Ղուկասի գեղեցիկ նկարը և Օսմանյան հին ծաղկեռձով Ղուկասի կիսախորանը: Ասոնցմէ զատ բազմաթիվ լուսանցազարդի տնօրինական մանրանկարներ՝ Ավետարաններուն պարունակութեանց համաձայն: Հիշ.՝ կերեւա կտրված հանուած է:

Ման.՝ Գնված է 1941-ին երկու ուրիշ հունարեն գրչագիրներու հետ՝ Նյու-Յորք, հույն մեծաքանակ նպարավաճառի մը 200 տողարի: Ավետարանին մեկ լուսանցքին կա կլոր, մանիշակագույն մելանով կնիք մը. «Ա.Ռ.Ա.Ջ.Ն.ՈՐԳ.Ա.Ր.Ա.Ն. ՀԱՅՈՑ [ԻԶՄ]ԻՐ»:

20

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(1640 p.)

Թերթ՝ 329: Մեծ.՝ $3,3/4 \times 5,1/8 \times 2$ ($2,1/2 \times 3,1/2$): Գիր՝ երկսյուն, բոլորգիր: Տող՝ 20: Նյութ՝ եվրոպական ջրանիշյալ թուղթ: Սկիզբի 10 թերթերը, ինչպէս նաև թերթ 21, 105, 114, 261, 250 270, ևն մազազաթ: Կազմ՝ գրոշմյալ կաշեպատ տախտակ՝ արծաթյա խաչերով և արծաթյա զարդազամբերով զարդարուած: Հան.՝ խոնավութիւնն թուղթը դեղնած, իսկ վերջին՝ մզլոտած: Սակայն դարձյալ լավ վիճակի մեջ: Ունի ամուր կազմ, թեև թերթ 112 և 113 ներկայիս կազմահան: Եզրահատման պատճառով լուսանցազարդերն ոմանք զսնված են: Թերթերուն ոմանց վերի մասերը վերանորոգյալ: Մանր. և Նուա.՝ Ունի կանոնատախտակները՝ բնութիւր ծաղկումով (7 և 8 թերթերուն կանոնատախտակները կտրված հանված): Միաէջյան շորս ավետարանիչներուն մանրանկարները կգտնվին իրենց Աւետարաններուն զլուխը: Գործածուած է ոսկի: Կան բազմաթիվ լուսանցազարդեր: Պառ.՝ Չորս Աւետարանները:

Ման.՝ Գնված է Նյու-Յորք հանգուցյալ հնավաճառ Գրիգոր Մինասյանի 1943-ին, 100 տողարի:

Հիշատակարան

Թերթ 325ա, գրչեն. «Փառք... Արդ, գրեցաւ սա ի մեծ թուականութեանս Հայոց Ռ և ԶԹ (1640) ամին, և հայարպնտութիւն մեծ աթոռոյն էջմիածնի՝ Տէր Փիլիպոսին և թագաւորութեան Պարսից կարմրագլխին՝ Շահ Սաֆուն: Ի յայսմ ամի գրեցար զսուրբ Աւետարանս ի յերկիրս Ղափան, ի գեաւղս Շէնհէր, ընդ հովանեաւ Ստաթէի սուրբ վանից և անապատաց և Սուրբ Ստեփաննոսի եկեղեցոյն... Աստուած ողորմի ասէք մեզ՝ Ղազար և Մարգարիտ գրչիս և ծնողացն՝ Կիրակոս քահանային և Թուրվանդին, Աղուբշին և Խանուամին և մեր հոգեւոր մայր՝ Խոսրով ասպաշխարողին...»:

Ղազար և Մարգարիտ վաստակավոր և բազմաբոցյուն գրիչներ և մանրանկարիչներ եղած են: Մարգարիտ մեր հազվագեղ կին գրիչ-ծաղկողներուն լավագոյններն կարելի է նկատել: